«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատությունը՝ Երևանի հ. 97 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Բալասանյան Գայանե

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2023

Բովանդակություն

Գլուխ 1. Մանկավարժական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

. Երեխայի անձի ձևավորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

. Առարկայա-խաղային գործունեություն

. Երեխայի սոցիալական զարգացումը

. Էգոլոգիական դաստիարակութուն

. Երեխայի մտավոր զարգացում

Գլուխ 2. Ծեսի, ծիսակարգի գործընթացը ազկագրական նութերով (երգ, պար, ծիսական պարագա, ծիսական կերպար, և այլ)

Գլուխ 3. Գործնական փորձարկման պլանավորում

Եզրակացություն

Գրականության ցանկ

Ներածություն

Ծեսը կանոնակարգված գործողությունների ընթացք է: Այն ունի հաստատուն գործունեության հետևողականություն: Յուրքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի ունի տոնական մաս, որտեղ կատարվում են ինչպես ծիսական, այնպես էլ ազգային երգեր, պարերգեր, պարեր:

Ծեսը, որպես միասնական, բազմաբնույթ, ինտեգրված գործունեություն, նպաստում է նախակրթարան, ընտանիք, համայնք արդյունավետ համագործակցությանը:

Նախակրթարանում ծեսի միջոցով սանի զարգացման գործընթացն արդյունավետ է, այն իր մեջ ոչ միայն ներառում է երեխայի համար կարևոր գործունեության ձևերը, այլև իրագործվում է լավագույն ազգային նյութերով: Ծեսը ազգային մշակույթի փոխանցման լավագույն մեխանիզմն է, որի նպատակն է՝

. ազգային գիտակցության, սովորույթների, արժեքների իմացում, փոխանցում

. ավանդական հայ երգի, պարի, բանավոր նյութի իմացում, յուրացում

. երեխայի մեջ ճանաչողական, բնապահպանական գիտելիքների ձևավորում

. ստեղծականության, երևակայության զարգացում

. հուզական, հոգատար, մարդասիրական վերաբերմունք՝ ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների, բնության, շրջակա միջավայրի նկատմամբ

Ծեսը որպես ինդեգրված բազմաբնույթ գործունեության ձև՝ դրական է ազդում երեխայի զարգացման ոլորտների վրա:

Խնդիրն այստեղ այն է,

. որ երեխան ոչ միայն սովորի, այլ ապրի ծեսերն ու ավանդույթները

. որ դրանք մանկապարտեզի ու դպրոցական տարիներից դառնան նրա կյանքի ու կենցաղի անբաժանելի մասը,

. որ տոնը ոչ թե բեմադրվի, այլ ապրվի,

. որ ինքը դառնա տոնի, ծեսի, ծիսակատարության ոչ թե հանդիսատեսը, այլ մասնակիցը

Գլուխ1.Մանկավարժական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:

1.1Երեխայի անձի ձևավորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:

Երեխայի զարգացման և նրա անձի ձևավորման գործընթացները փոխկապակցված են:

Անձնավորությունը մարդու սոցիալական նկարագիրն է և բնութագրում է մարդկային այն որակները, որոնք ծեռք են բերվում հասարակության մեջ, մարդկանց հետ հարաբերվելու ընթացքում:

Անձնավորության հիմնական չափանիշներն են գիտակցությունը և ինքնագիտակցությունը որոնք մարդուն դարձնում են ինքնուրույն:

Երեխայի զարգացմանը, նրա անձնավորության ձևավորմանը նպաստող խթանները պայմանականորեն միավորում են երեք խմբի՝ կենսաբանական, սոցիալական և մանկավարժական:

Մանկավարժական գործոնների շարքին է պատկանում երեխայի ինքնուրույն գործունեությունը, որը խրախուսվում և ձևավորվում է մեծահասակների կողմից:

Ինքնուրույն դրսևորումները խթանում են երեխաի զարգացման գործընթացը, նպաստում նոր հաջողությունների ու նվաճումների:

Մարդկային գոյատևմանհիմնական ձևը շարժումն է: Երեխային բնորոշ են ակտիվության տարբեր տրսևորումներ, որոնք նպաստում են նրա ընդանուր զարգացմանը և օգնում կողմնորոշվելու միջավայրում:

Ֆիզիկական ակտիվությունը՝ ապահովում է երեխայի օրգանիզմի կենսագործունեությունը:

Իմացական ակտիվությունը՝ նպաստում է աշխարհաճանաչմանը, իսկ ինտելեկտուալ ակտիվությունը՝ ինքնահաստատմանը նոր միջավայրին:

Հուզական ակտիվությունը՝ դիմացինի հետ հաղորդակցվելու հրաշալի միջոց է, համագործակցության առաջին դրսևորումը: Երեխայի սոցիալական ակտիվությունը դրսևորվում է գործունեության տարբեր ձևերով: Խաղային գործունեության միջոցով է երեխան բավարարում է իր սոցիալական ակտիվության պահանջմունքը:

1.2 Առարկայա-խաղային գործունեություն

Վաղ տարիքում ձևավորվում է առարկայական գործունեությունը, որը նպաստում է երեխայի հոգեկան զարգացմանը:

Երեխայի առարկայա-խաղային ակտիվությունը դրսևորվում է հետևյալ ձևով:

. երեխան փորձում է առարկաներն օգտագործել տարբեր նպատակով:

. փորձում է գտնել առարկաների կիրառման հետաքրքիր եղանակներ:

. առարկաները սկսում է օգտագործել որոշակի դերային նշանակության:

1.3 Երեխայի սոցիալական զարգացումը

Երեխայի սոցիալական զարգացումը վաղ տարիքում ընթանում է արագ տեմպերով և ուղղակի պայմանավորված է մեծահասակների ակտիվ մասնակցությամբ և մեծահասակների շփման ընթացքում: Դրանք են՝

. հաղորդակցման,

. դրական հուզականության,

. մարդկային կենսակերպի ձևերի և հարաբերությունների յուրացման պահանջմունքները:

Հետազոտությունների համաձայն երեխայի առաջին սոցիալական արձագանքը դրսևորվում է 1,5-2 ամսականում:

Այն սոցիալկան պահանջմունքների բավարարման կանչ է և դրսևորվում է հուզաշարժողական հետևյալ ռեակցիաների ձևով.

. ձեռքերի և ոտքերի ակտիվ շարժումներով

. դիմախաղով, մասնավորապես, ժպիտով և աչքերի փայլով

. առանձին հնչյունների անմիջական արտաբերմամբ

Վաղ տարիքի երեխաների հիմնական ձեռքբերումներն են՝

. ուղաձիգ քայլքն ու խոսքային հաղորդակցման կարողությունները

. առարկայական աշխարհընկալումը, որն այս տարիքի կենտրոնական իմացական գործառույթն է

. զգայական գործառույթների առաջնային զարգացմամբ պայմանավորված բարձր հուզականությունը

. գիտակցության խորհրդանիշային գործառույթը, <<ես ինքս>> գիտակցության դրսևորումները

1.4 Էկոլոգիական դաստիարակություն

Էգոլոգիական կրթության սկիզբը դրում է նախադպրոցական տարիքում՝ ատուկ կամակերպած էկոլոգիական կամ գոյապահպան դաստիարակության միջոցով: Էկոլոգիական դաստիարակությունը երեխայի էկոլոգիական գիտակցության և մտածելակերպի ձևավորման, էկոլոգիական վարքագծի և մշակույթի դաստիարակության գործընթաց է:

Էկոլոգիական դաստիարակության նպատակը վաղ տարիքից բնության հետ երեխայի միավորումն է, բնության հանդեպ պատասխանատու ոգատար երաբերմունքի ձևավորումը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ երեխան նախադպրոցական տարիքում արդեն ընկալում և հասկանում է բնության մեջ գոյություն ունեցող բազմաբնույթ շղթայական կապերը հետևաբար ընդունակ է պատկերացնելու բնության ամբողջականությունը:

Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցականի առանձնահատկության ձևավորման կարևորագույն գործոն է:

Էկոլոգիական դաստիարակութան խնդիրների ամակարգում առաել կարևորվում է երեխայի բնապահպան վարքը, մասնակցությունը միջավայրը բարելավելու և առողջ կենսակերպ հաստատելու գործին:

1.5 Երեխայի մտավոր զարգացումը

Նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր դաստիարակութան կարևորագույն խնդիրներն են.

. ընկալման զարգացումը.

. մտածողության զարգացումը.

Մտավոր դաստիարակության մյուս խնդիրները լրացնում և իմաստավորում են նշված հիմնական խնդիրները: Դրանք են՝

. հոգեկան իմացական գործընթացների, հատկապես խոսքի զարգացումը (խոսքը մտածողության գործիքն է):

. հետաքրքրության և ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը.

. տարրական գիտելիքների համակարգի ձևավորում.

Երեխան ի սկզբանե հետաքրքրասեր է: Ի.Մ Սեչենովը երեխայի աշխարհը ճանաչելու ներքին ցանկությունը համարել է բնածին նյարդահոգեկան հատկություններից <<ամենաթանկարժեքը>>: Ի.Պ.Պավլովը բացատրում է նշված հատկությունը <<Սա ի՞նչ է>> ռեֆլեքսի գոյությամբ: Երեխան ի ծնե հարցասեր է, <<ինչուիկ>>, փորձում է պարզել իրեն հետաքրքրող առարկաներն ու երևույթները՝ գործողությունների, խոսքի հարցերի և ինքնուրույն հետազոտությունների միջոցով:

Մտավոր դաստիարակության ընթացքում չափազանց կարևոր է պահպանել երեխայի բնածին հետաքրքրասիրությունը և, այն հիմք ընդունելով, ձևավորել մտավոր գործունեության իմացական դրդապատճառներ:

Հետաքրքրությունը իմացական ակտիվության յուրահատուկ ձև է, որն արտահայտվում է ամեն բան իմանալու, որևէ գործունեության մեջ ներգրավելու, առանց տարբերակման ճանաչելու ցանկությամբ: Հետաքրքրասեր երեխան ունի ամեն ինչ իմանալու, ամեն տեղ ակտիվ մասնակցելու բուռն ցանկություն: Նրա համար էական չէ, թե ինչ է ճանաչելու, նրան հետաքրքրում է իմացության ընթացքը: Ս. Լ. Ռուբինշտեյնը և Դ.Պ. Գոտովիկովան իմացական ակտիվության ձևը բնութագրել են որպես իմացության <<չտարբերակված>> ձգտում:

Գլուխ 2. Ծեսի, ծիսակարգի գործընթացը՝ ազգագրական նյութերով (երգ, պար, ծիսական պարագա, ծիսական կերպար, և այլ)

Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային սերընդեսերունդ նրա փոխանցման միջոցները: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ: Հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ, ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործ, և՛ որպես գործիչ, և՛ որպես քննադատ: Ծեսերը և սովորույթները հասարակական հարաբերությունները փոխանցող մեխանիզմներ են :

Ազգային ծեսերի, տոների իրականացման մեթոդական ուղեցույց

Ծեսն իրականացվում է նախակրթարանում (կրտսեր դպրոցում): Յուրաքանչյուր ծես, տոն իրագործվում է համապատասխան միջավայրում՝ բակում, բնության գրկում, փակ տարածքում:

Նպատակ

Ազգային մշակույթի ժառանգում, յուրացում, փոխանցում ծեսերի՝ որպես միասնական, բազմաբնույթ, ինտեգրված գործունեության միջոցով

Խնդիրներ

Ավանդական ծեսերի միջոցով ազգային ավանդույթների, արժեքների յուրացում ոչ թե որպես դաս կամ միջոցառում, այլ՝ բնական կենսակերպ

- ազգային արժեքների պահպանում, հայապահպան մտածողության ձևավորում
- ազգային մշակութային արժեքների պահպանման, փոխանցման գործում սեփական մասնակցությունն ունենալու պահանջմունքի ձևավորում
- ստեղծագործելու, հետազոտելու, ինքնադրսևորվելու կարողություն

Իրականացում

- Սաները ծանոթանում են

ա. կոնկրետ ազգային, ժողովրդական տոնի, ծեսի պատմությանը, դրա հետ կապված ավանդություններին, սովորույթներին,

բ. տոնի, ծեսի խորհրդին, արարողակարգին,

գ. տոնին, ծեսին առնչվող երգերին, պարերին, խաղիկներին, ժողովրդական բանահյուսության նմուշներին,

. իրենց ընտանիքում կամ ուսումնական ճամփորդությունների ընթացքում գրի են առնում տոնի, ծեսի հետ առնչվող բանահյուսական նյութ.

ա. խաղիկներ,

բ. առած - ասացվածքներ,

գ. հանելուկներ,

դ. հեքիաթներ, պատմություններ, ավանդություններ,

ե. երգեր:

. *նկարում են*

ա. ծիսական հերոսներին,

բ. ծիսական պատկերներ

. *սովորում են*

ա. ծիսական և ծեսին համապատասխան երգեր, ասույթներ, ասիկներ, օրհնանքներ,

բ. ավանդական պարեր, երգեր, պարերգեր

հորինում են հանելուկներ, հեքիաթներ, գովք, օրհնանք,

պատրաստում են ծիսական պարագաներ,

բեմականացնում են ծիսական, ազգային երգեր, խաղարկում են ծիսական գործողություններ, ծիսական խաղեր,

կատարում են բնագիտական փորձեր՝ կապված տարվա տվյալ ժամանակաշրջանում բնության, բնական երևույթների դրսևորումների ուսումնասիրման, օրինաչափությունների բացահայտման հետ,

կազմում են մաթեմատիկական խնդիրներ,

գնում են ուսումնական ճամփորդությունների,

մեծերի օգնությամբ գրում են նամակներ, բարեմաղթանքներ, վերապատմում, փոխադրում են իրենց տպավորությունները:

Սանը, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով՝ յուրացնում է ծեսը:

Ի՞նչ խնդիրներ են լուծվում.

- նյութի յուրացում (լեզու, մտածողության գեղարվեստական այլ արտահայտչամիջոցներ),
- գիտելիքների, կարողությունների, դրսևորում և կիրառում
- գեղարվեստական խոսքի մշակում,
- տարբեր կարողությունների դրսևորում, հղկում, մի շարք հմտությունների ձեռքբերում, մշակում (լեզվական, թատերական),
- գրական — գեղարվեստական ճաշակի զարգացում,
- ինքնադրսևորում, բարդույթներից ձերբազատում:

Այս աշխատանքները նպաստում են.

-երեխայի բառապաշարի հարստացմանը,

-մտածողության ձևավորմանը,

-ստեղծագործական երևակայության զարգացմանը,

-ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը,

-բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը,

-ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ,

-զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, երաժշտություն և այլն),

-հնարավորություն են տալիս գնահատելու և յուրացնելու ազգային արժեքները, --- ավելի մոտիկից ճանաչելու իրենց ուսուցիչներին, տատիկներին, պապիկներին, ծնողներին, հարազատներին

-համատեղ, ստեղծական, ինքնուրույն գործունեության արդյունքում լուծվում են նաև ուսումնական մի շարք այլ խնդիրներ:

Այս նախագծերին մասնակցության արդյունքում սանը

. *կիմանա*

-ազգային ծեսերը,

-ազգային սովորույթները,

-ազգային ավանդական պարերը,

-հայկական ժողովրդական և ծիսական երգերը,

-ծիսական կերպարները,

-ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը,

-ծիսական կերակրատեսակները,

-ծիսական պարագաները:

. *կկարողանա*

-պարել ազգային ավանդական պարեր,

-երգել հայկական ժողովրդական և ծիսական երգեր,

-պատրաստել ծիսական պարագաներ,

-խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր,

-պատրաստել ազգային ծիսական կերակրատեսակներ,

-ծնողի հետ համացանցից, այլ աղբյուրներից ծեսին վերաբերվող նյութեր գտնել:

. *կլինի*

-ազգային ավանդույթները, դրանց բովանդակությունն ու խորհուրդն իմացող, դրանց արժեքները կրող, փոխանցող, տարածող, ակտիվ մասնակից:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ սաները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

Այս աշխատանքները նպաստում են.

. երեխայի բառապաշարի հարստացմանը,

. մտածողության ձևավորմանը,

. ստեղծագործական երևակայության զարգացմանը,

. ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը,

. բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը,

. ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ,

. զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երաժշտություն և այլն),

. հնարավորություն են տալիս գնահատելու և յուրացնելու ազգային արժեքները, ավելի մոտիկից ճանաչելու իրենց ուսուցիչներին, տատիկներին, պապիկներին, ծնողներին, հարազատներին

. համատեղ, ստեղծական, ինքնուրույն գործունեության արդյունքում լուծվում են նաև ուսումնական մի շարք այլ խնդիրներ:

Գլուխ 3. Գործնական փորձարկման պլանավորում

Հայ ազգային ծեսերն ունեն ծիսական և տոնական մաս:

Ծիսական մասն կանոնակարգված է իր գործողություններով, դրանց ընթացքով: Կան ծիսական կերպարներ, որոնք ունեն իրենց դերը տվյալ ծիսակարգում, կատարում են համապատասխան գործողություններ: Կան ծիսական պարագաներ, կերակուրներ, և այլն:

Տոնական մասն իր մեջ ներառում է աշխարհիկ գործողություններ, պարագաներ, կերպարներ, խաղեր (ազգային, ավանդական, մանկական, և այլն), ներկայացումներ, տոնախմբություն՝ երգ ու պարով:

Յուրաքանչյուր ծեսի հիմքը հոգևոր է: Ժողովուրդն, ամենայն պատասխանատվությամբ վերաբերվելով ծիսակարգին, ստեղծել է իր աշխարհիկ պատկերացմամբ շարունակվող ընթացք՝ գործողություններ, կերպարներ, պարագաներ, երգեր, պարեր, խաղեր:

Նախակրթարանում ծեսն իրագործվում է ծիսական, ազգային, մանկական երգերով, ծիսական գործողություններով, ծիսական կերպարների անմիջական, կերպարին բնորոշ անմիջական խաղով: Երգերը կատարվում են կենդանի, բնական խաղով, մասնակի բեմականացմամբ, ռիթմիկ ծափերով, ճոճքով, դերակատարմամբ: Առկա է երեխայի ինքնուրույն աշխատանքը, յուրաքանչյուրը խաղում է իր խաղը՝ ընդհանուրի մեջ լուծելով մի շարք խնդիրներ, միևնույն ժամանակ ծեսի միջոցով յուրացնելով ազգային մշակույթը:

Ծեսի հիմնական գործողություններն՝ ըստ հերթականության

Նախապատրաստում

Ծիսական տոնախմբությունը չի կարող իրականանալ առանց նախապատրաստական փուլի: Դա կարևոր ուսումնական գործընթաց է, որն անցնում են մասնակիցները՝ մեծից փոքր: Եթե մասնակիցները պատրաստված են, գիտեն ծեսը, ծիսական, ազգային երաժշտական նյութը, ծիսական կերպարներին, կարողանում են իրականացնել ծիսական գործողություններ, ազատ ու անկաշկանդ են, ուրեմն, անկախ որոշ թերություններից, բացթողումներից, հաստատ կարող ենք ասել՝ ծիսական տոնակատարությունը չի կարող չհաջողել:

Սուրբ Հարության տոն. Զատիկ



Զատիկը Քրիստոսի հարության տոնն է: Այն կապված է Քրիստոսի տառապանքների, մահվան ու հարության պատմության հետ: Այն տոնում են մեծ հանտիսավորությամբ եկեղեցում պատարագով:

Զատիկին կատարվող ծիսական գործողություններ

ա. Զատկական ուտեստների պատրաստում

բ. Զվի բուսանախշում

գ. Ակլատիզի և Ուտիս տատի հանդիպումը. Զատկական ձվախաղեր

դ. Մատաղի բաժանում (ուսումնական ծիսական տոնախմբության ժամանակ այս մասը չի իրականացվում)

ե. Զատկական տոնախմբություն

Ուտիս տատի և Ակլատիզի հանդիպումը

Խմբված երեխաներին է մոտենում Ակլատիզը՝ վախեցնելով ձեռքին բռնած Ակլատիզի տիկնիկով, որի գլխին մնացել է մեկ փետուր.

– Յեղ կերե՞լ եք:

– Չէ՛՛՛:

– Այ էդպես, թե չէ, այ էս սոխով ձեր աչքերը կմռմռացնեմ: Միս կերե՞լ եք:

– Չէ՛՛՛:

– Ապրեք, թե չէ, այ էս բիբարով ձեր լեզուները կդաղեմ: Ձու կերե՞լ եք:

– Չէ՛՛՛:

– Ա՛, թե չէ, այ էս փետուրով ձեզ խուտու՛տ կտամ:

Ձեռքի փետուրով խուտուտ է տալիս երեխաներին, որոնք ծիծաղելով փախչում են այսուայն կողմ:

Երգելով գալիս է Ուտիս տատը.

– Կոտիկ, կոտիկ եղ ունեմ,

Ամեն մարդու դեղ ունեմ,

Կոտիկ, կոտիկ եղ ունեմ,

Բալիկներիս ախորժակի դեղ ունեմ:

Ուտիս տատի և Ակլատիզի զրույցը

Ուտիս տատը համոզում է Ակլատիզին, որ որքան էլ վերջինս ճիշտ է արել, որ թույլ չի տվել շատակերություն, անկարգություն, բոլոր դեպքերում մանուկը մնում է մանուկ, թող երբեմն անմեղ մանկական անկարգություն անի, մի քիչ էլ շատ ուտի, չէ՞ որ նիհարել են: Ակլատիզն արդարանում է, ասելով, որ չնայած նիհարել են, բայց առողջ են: Ուտիս տատն էլ հորդորում է, որ Ակլատիզը թաթախվի մածնի մեջ, ելնի կտուրը, թևեր առնի, թռչուն դառնա, թռչի, գնա:

Ուտիս տատ՝

– Էրեխեք ջան, էկեք էս Ակլատիզի վերջին փետուրը պոկենք ու չիք – չիք անենք:

Երեխաներից մեկը պոկում է Ակլատիզի վերջին փետուրը, որի ընթացքում բոլորն ասում են**:**

– Չի՛ք, չի՛ք, Ակլատիզի վերջին փետուրը չի՛ք:

Երեխաներից մի քանիսը մոտենում են Ակլատիզին, բռնում ձեռքերից ու տանում մի կողմ, որտեղ մի քանի երեխա շրջան են կազմել և դարձել «թաս», որի մեջ «թան» կա: Ակլատիզին մտցնում են շրջանի մեջ: Շրջանը փոքրանում է, Ակլատիզ — Խուլուճիկը կքանստում է: «Թաս» երեխաները ձեռքերն առաջ են բերում ու ծածկում են Ակլատիզին: Քիչ անց շրջանը բացվում է, Ակլատիզը, որն այդ ընթացքում արագ հագնում է նախօրոք պատրաստած թևերը, թռչունի նման թևերը թափահարելով՝ հեռանում է:

Երեխաները բացականչում են.

Չիք, չիք, Ակլատիզը չիք:

Մեծ պասն անցավ, գոլ էլավ, Ակլատիզը թոլ էլավ:

Ուտիս.

– Օրհնվեք, յոթ որդով սեղան նստեք,

Հազար էսպես սեղան նստեք,

Ու ձեր մինը հազար դառնա,

Դռներդ միշտ բաց կենա,

Օջախներդ վառ մնա,

Էսպես առատ սեղաններ

Ձեզնից ամեն մինն ունենա:

Երեխաներից մեկը կամ բոլորն ասում են.

– Զատիկն ասել է. «Հենց գամ՝ արմանաս, հենց գնամ՝ զարմանաս»:

Ուտիս.

– Հողմը փչեց ի հարավեն,

Ազատվեցին դաշտք ձյուներեն,

Բերկրություն է ամեն տղոց.

Բոլորը.

– Քրիստոս հարյավ ի մեռելոց:

– Օրհնյալ է հարությունը Քրիստոսի:

– Մեզ և ձեզ մեծ ավետիս:

Երգում են «Սուրբ Աստված սուրբ» հատվածը Պատարագից:

Միասին՝

Զատիկն ասել է. «Հենց գամ՝ արմանաս, հենց գնամ՝ զարմանաս»:

Երգում և խաղում են ծիսական երգը

Միասին՝

– Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ:

– Հավը կուտե հատիկ, հատիկ,

Ծով ձմեռեն կելնե Զատիկ:

Երգում և խաղում են «Գնացե՛ք, տեսե՛ք» ծիսական երգը

Շարունակում են ուրախ երգ ու պարով, ձվախաղերով:

Խաղեր կարկաչայով Զատիկին խաղալու համար

«Անձրև»

Կարկաչաներով սկսում են կամաց շրխկացնել՝ անձրևը նոր է սկսվում:

Հետզհետե ուժեղացնում են շրխկոցները՝ անձրևը ուժեղանում է:

Շրխկոցներին միանում են ոտքերի հարվածները՝ անձրևը շատ ուժեղ է:

Ոտքերի հարվածները դադարում են, կարկաչաները հետզհետե մեղմացնում են շրխկոցները: Քիչ անց անձրևը դադարում է: Շարունակում են միայն կլթկլթացնել լեզվով՝ հետզհետե դանդաղեցնելով ու կամացացնելով:

«Կարկաչա»

Երկու երեխա կանգնում են իրար դիմաց, ձեռքերը պահում կրծքի ուղղությամբ, արմունկները ծալած, ձեռքերի ափերը նայում են իրար: Երեխաները ձեռքերը այդ դիրքով մոտեցնում են իրար: Նրանցից մեկի ձեռքը հայտնվում է մյուսի ձեռքերի մեջտեղում, իսկ մյուս ձեռքը «նայում» է դիմացի երեխայի ձեռքի հակառակ երեսին:

– երեխաներից մեկը ծափ է տալիս՝ ափերի մեջ առնելով դիմացի երեխայի ափն ու հակառակ երեսը.

– նույնն անում է մյուս երեխան:

Խաղում են «Կարկաչա» երգի ուղեկցությամբ՝ երգի ռիթմով:

Կարելի է խաղալ նաև այլ ռիթմիկ երգի կամ երաժշտության ուղեկցությամբ կամ առանց երաժշտության:

«Ձվերն ու կարկաչաները»

Երեխաները բաժանվում են ձվերի ու կարկաչաների:

Զվերն ընտրում են իրենց համար գույներ: Երեխաները որոշում են, թե ինչ ռիթմով և ուժգնությամբ պետք է շրխկացնեն յուրաքանչյուր գույնը: Հերթով առաջ են գալիս ձվերը, կարկաչաների խումբը, հիշելով գույնի համապատասխան ռիթմը, շրխկացնում է: Խաղի ընթացքում դերերը կարող են փոխվել:

Կարելի է խաղալ նաև հակառակ հերթականությամբ: Կարկաչաների խումբը շրխկացնում է որևէ գույնի ռիթմիկ պարկերը, ձվի համապատասխան գույնն առաջ է գալիս և, շարունակվող ռիթմի տակ, կատարում ռիթմիկ շարժումներ:

Ամեն անգամ խաղալիս ըստ ցանկության կարելի է փոխել գույների ռիթմիկ կառույցը:

Բացի կարկաչաներից կարելի է օգտագործել այլ շրխկաններ, ինչպես նաև «բնական» հարվածային ձայներ

Զատկական ձվախաղեր

Զատկական ձվախաղերի հիմքում ընկած են Ռուդիկ Հարոյանի «Զատիկ» գրքի «Զատկի տոնի ձվախաղեր» բաժնի խաղերը, որոնք ձևափոխված են և հարմարեցված 2-5 տարեկան սաների տարիքային խմբին:

Զուպտտոցի

Խաղացողները հրահանգով պտտում են ձվերը: Ում ձուն երկար պտտվեց, այդ ձուն համարվում է հաղթողը:

Զուկոտրոցի

Զու կոտրոցին խաղում են երկուսով: Մրցակիցներից յուրաքանչյուրը խաշած, չկոտրված ձու պետք է ունենա: Խաղացողներից մեկը ձուն պահում է ափի մեջ՝ բութ մատի և ցուցամատի օգնությամբ, չծածկելով ձվի քիթը, իսկ մյուսը պետք է աշխատի իր ձվի քթով հարվածել խաղընկերոջ ափի մեջ բռնած ձվի քթին այնպես, որ դիմացինի ձուն կոտրվի: Որից հետո «կռվեցնում» են ձվի բութ քթերը:

Զատկի ասույթներ, առածներ

Զատիկն ասել ա՝ հենց գամ, արմանաս, հենց գնամ, զարմանաս:

Կարմիր ձուն Զատկին կսազե:

Զատկե Զատիկ է, նավակատիկ է, չամչե հատիկ է:

Հավը կուտե հատիկ, հատիկ, ծով ձմեռեն կելնե Զատիկ:

Զատիկ ավելի շուտ եկավ, քան նավակատիկը:

Զատիկը թռի, մեր կովը ծնի:

Կուշտ ուտելը Զատկի իրիկունն է:

Կարմիր ձու տուր, կարմիր օր տամ:

Զատիկը առանց ձվի չի լինի:

Զատկից հետո կարմիր հավկիթ:

Զատիկի ասացվածքներ

Բուն Բարեկենդան մինչև Զատիկ՝ 49-ը հատիկ:

Ակլատիզ, բռնեբիբիս, արի մեր տուն, կախվիր երթիս:

Պաս չբռնողը Զատկի համը չի գիտենա:

Ակլատիզը փետելով Զատիկը շուտ չես բերի:

Զատիկ, զատիկ, նավակատիկ, արի նստի մեր տան մոտիկ:

Հավը կուտե հատիկ, հատիկ, ծով ձմեռեն կելնե Զատիկ:

Զատիկն առանց ձվի չի լինի:

Ձմեռն անցավ, գարուն եկավ, Պասը գնաց, Ուտիսն եկավ:

Կուշտ ուտելը Զատկի իրիկունն է:

Զատկեզատիկ է, նավակատիկ է, չամչե հատիկ է:

Զատիկն ասել է. – Հենց գամ՝ արմանաս, հենց գնամ՝ զարմանաս:

Եթե ցորենի հատը հողի մեջ չընկնի և մեռնի, ինքը մենակ կմնա: Բայց եթե մեռնի՝ շատ պտուղ կբերի:

Քրիստոս հարեավ ի մեռելոց, օրհնյալ է հարությունը Քրիստոսի, մեզ և ձեզ մեծ ավետիս:

– Զատիկ, զատիկ, նավակատիկ,
Արի նստի մեր տան մոտիկ,
Իմ հեր քե կանի ուր լաճիկ,

Զատկի սեղանին սովորաբար դրվում էր ձու, ձուկ, չամչով փլավ, տապակած կանաչի: Ժամանակին ածիկը և սամիրն այդ տոնի ճաշացանկում պարտադիր էին:

Աձիկը պատրաստվում էր ցորենի ծլեցրած կանաչի հյութով, որն ուտում էին պահքից դուրս գալուց՝ Զատկին նախորդող թաթախման երեկոյան:

Զատկի կերակուրներից ամենաընդունվածը չամչով փլավն է:

Զատկի չամչով փլավ

Հենց սովածանան,

Զատկի փլավը միտը կը բերեն:

Բրինձը եփում են աղաջրում: Կաթսայի տակ լավաշ են դնում, վրան՝ շերտ-շերտ բրինձ և յուղի մեջ տապակած չամիչ լցնում:

Ձուկ և գինի

Ձո՛ւկ կեր, գինի՛ խմիր. վայ ձկան գլխին:

Ձո՛ւկ կեր, ջուր խմիր. վայ ուտողի գլխին:

Պարտադիր ուտեստներից մեկն էլ ձուկն է՝ խաշած կամ տապակած վիճակում, և կարմիր գինին:

Թանապուր

Հոգուտ մեռնիմ թանապուր,

Դու էլ դառար կերակուր:

Թանապուրի ձավարը լվանում են, վրան ձու կոտրում և ալյուր ավելացնում: Անընդհատ խառնելով՝ քիչ-քիչ ավելացնում են թանը: Պատրաստի ապուրին ավելացնում են սոխառած և տարբեր համեմունքներ՝ համեմ, դաղձ, ուրց, բազուկի տերևներ:

Զատկի սպասը սովորականից ավելի թանձր է պատրաստվում և անպայման՝ դաղձով:

Տապակած բանջար

Բանջարը (սիբեխ, սպանախ, փիփերթ, թելուկ, եղինջ) լվանալուց հետո եփում են աղաջրով: Քամում են և տապակելով յուղի մեջ՝ վրան ավելացնում հարած ձու:

Ի դեպ, այդ օրը բանջարի հետ տուն էին բերում նաև մանուշակներ, որոնք խաչաձև փնջելով՝ դնում էին Զատկի սեղանի վրա:

Պինդ խաշած ձու՝ կանաչիով

Զատկի սեղանին հատուկ է կանաչիների առատությունը, սակայն ձվի հետ ճաշակելու ամենասիրված կանաչիները թարխունն ու դաղձն են:

Պինդ խաշած ձուն առավել համեղ դարձնելու նպատակով այն մաքրել են կեղևից, դեղնուցը անջատել սպիտակուցից, ապա դեղնուցը հարել պղպեղի, աղի, կարագի, թթվասերի հետ: Հարած դեղնուցով լցոնել են սպիտակուցը, վրան կտրատել թարխուն և պնակի մեջ շարելով՝մատուցել:

Եզրակացություն

Ավարտական հետազոտական աշխատանքի տեսական գրականության ուսումնասիրության և վերլուծության, գործնական աշխատանքի արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների.

1. Նախակրթարանում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որոնց բաղադրիչներից են ազգային, ծիսական, ավանդական, ինչպես նաև մանկական խաղերը:

2. Ազգային ծեսերի իրականացումը նախակրթարանում ուղղված է նախադպրոցական տարիքի երեխաների ոչ միայն ազգային մշակույթի փոխանցմանն ու յուրացմանը, այլև ընդհանուր զարգացմանը, օրինաչափորեն նպաստում է նրանց հոգեկանի զարգացմանը, հուզազգացմունքային ոլորտի հարստացմանը, հասակակիցների, մեծերի հետ փոխհարաբերությունների հաստատմանը, սեփական սոցիալական փորձի ձեռքբերմանը:

3. Ծիսական, ազգային երգերը, խաղերգերը, ասերգերը, պարերգերը, հաշվերգերը անձի ձևավորման, կրթության մեջ արդյունավետ նյութեր են, որոնք մեծապես նպաստում են երեխայի ինքնուրույն գեղարվեստական գործունեության ձևավորմանը:

4. Տեսածն ու լսածը, փորձածը նկարելը, այդ մասին պատմելն ու զրուցելը ավելի են ամրապնդում երեխայի գիտելիքներն ու վերաբերմունքը:

5. Ազգային տոներին, ծեսերին մասնակցելու արդյունքում երեխան առնչվում է ազգային երգ ու պարին, սովորույթներին, մշակույթին, ձեռք է բերում նոր գիտելիքներ ու փորձ:

Ներկայացված նյութն առաջարկում ենք կիրառել նախակրթարաններում, ընտանիքում, այլ մանկական հաստատություններում: Այն ոչ միայն երեխաների, այլև բոլորի համար ազգային մշակույթի յուրացման արդյունավետ նյութ է, ծրագրում ներառելով ազգային ծեսը՝ ծիսական երգերով, խաղերգերով, ծիսական միջավայրով, ճիշտ ուղղությամբ կուղղորդվի սանի ընդհանուր զարգացումը:

Օգտագործված հոդվածներ, գրականություն.

1. 5-6 տարեկաններ. Դաստիարակի ուղեցույց
2. Երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ
3. Նախադպրոցական մանկավարժություն. ձեռնարկ
4. Նախադպրոցական մանկավարժություն. Նաիրա Գրիգորյան
5. Ա. Շահնազարյան, Երաժշտությունը նախակրթարանում
6. Երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ
7. Ծննդից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ
8. С. А. Козлова, «Дошкольная педагогика»